

ԱՐԵՒԵԼԵՆԴԵՐ

ԱՅԼԱՐԱՆԱԿԱՆ

Ամիսը երկու անգամ կը հրատարակուի 15ին եւ վերջին :
Վեցամսեայ գինն է 40 դանեկան կանխիկ :
Մէկ քիւնն
Ուզողը կրնայ ստորագրուիլ, Կ. Պօլիս Մերձանը Պ. Յ.
Մարգարեանի գրատունը :
Գրգար աղասի խանը վերի յարկը Թ. 5 Խմբագրի սենեակը :
Ստորագրութիւնը Յուլիս 15 առօրէի քիւնն կսկսի :

Ո եւ իցի Ազգային չափաւոր ծառուցում մը ձրի կը հրա-
տարակուի :
Անձնական լաճու մը համար բլլալու ծառուցումներուն
համեմատաբար սակարկութիւն կըլլայ :
Իւր նպատակին յարմար եկած ստորագրեալ համակներն
ու յօդուածները կընդունուին, եւ ուզեն հետադա-
նդանով ալ կը հրատարակուին :

54 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ 1860.

ԹԻՒ 12

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅ

Տես Թիւ 11.

Իմ գրչիս գործը չէ ստորագրել այս վայր-
կենին տեղի ունեցած տեսարանը, և ոչ ալ այն
սարսափչ ալլալուն մը որ տիրեց հիւանդին դէմ-
քին վրայ . « Հօր Աստուծոյ և Քրիստոսի
հաւատայ » կրկնեց կոյսը իր հօրը ձեռունները
սեղմելով և կուրծքին տանելով . . . քառորդ
վայրկեան անդնդային լռութիւն տիրեց սեն-
եակին մէջ . ամբարշտ և թշուառ հիւանդը որ
իր կեանքը Քրիստոնեաները և Աստուծաւ
պաշտօնները նախատելով և ծաղրելով անցուցած
էր, իր պառկած տեղը անշարժացած քարացեալ
աչուքները տնկուած իր աղջկանը կը նայէր, և
հազիւ շնչառութիւն կրնէր, թէ և սրտին անստո-
րագրելի ալեկոծութիւնը նոյն իսկ իր այս վիճա-
կովը կը հասկըցուէր, բայց անկից քիչ չէր հայ-
րասէր կոյսին սրտին յուզմունքը, կը դողդողար
հոգին որ չըլլայ թէ հայրը Աստուծոյ հետ չի
հաշտուած մեռնի, իսկ իւր արտաքին կերպա-
րանքը ամենահամբաւաւոր Իտալիացի արձա-
նագործը անգամ դժուարաւ կրնայ ստորագրել,
ուր կը մնամ ես . . . իր աչուքները որոնց աղ-
բիւրակաց քով մարդարտի նման արտասուաց կա-
թիւններ կը փալկիլին, ուղղակի իր կորսուեցը-
լիք հօրը աչուքներուն մէջ տնկած, ծնկան վրայ
անոր անկողնին քով նստած, թողուած մադերը
մարմարիտի պէս ճերմակ ուսերուն վրայէն վար
որսկուած խեղճը ջերմէ բռնուածի պէս կը դո-
ղար . . . հոս մօտեցի իմ հետս ո՛ր Քրիստոսի

և Աստուծոյ չի հաւատացող կտրիճ, եւ խորհէ
վայրիկ մը թէ քու վախճանդ ներկայացրող
տեսարանը այսպէս պիտի չըլլայ մի, է՛հ շտապէ՛
ուրեմն, թող յիմարութիւնը և ամբարտաւա-
նութիւնը, ներկայացուի սիրող Արարչիդ, մօ-
տեցրէ՛ . . .
Թիւնդ քանի որ դեռ ժամանակ ունիս, քանի
որ դեռ կրնաս ապաշխարհել, քանի որ դեռ
հրեշտակը չէ սկսած հնչելու քու մահուանդ
զանգակը . շուտ ըրէ՛ հաւատա՛ Քրիստոսի
Քրիստոնեայ եղբի՛ր, ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԼԻՆԵՆՈՎ
ԵՅԻ ԲԱՆ ՄԵՆ ԱՆ ԶԻ ՇԱՀԻՍ ԲԱՆ ՄԵՆ ԱՆ ԶԵՍ
ԿՈՐՍՈՆՅՈՒՆԵՐ . . .

Հազիւ քանի մը վայրկեան տեւեց այս տե-
սարանը մարդասէր Արարիչ կարծես վերջին աղ-
բարարութիւն մը ընելու համար, բնութիւնը
տխրեցուց հաստատութիւնը թուիս և խիտ
ամպերով ծածկեց . և ահա որոտմունքները ըս-
կըսան գողալ, և կայծակները մէկըմէկու ե-
տեւէ Արիւնից Սուրհանդակի նման մթնոլորտը
կը ճղքէին, և անդունդը կ'ընային, համայն
տիեզերքը սարսափած էր, և ահա անանկ սոս-
կալի անձրեւ մը սկսաւ տեղալ որ մարդ կը կար-
ծէր թէ հաստատութիւնը պիտի կործանի . . .
այս վայրկենիս հիւանդը իր վերջին ճիգը դոր-
ծածելով, և կոյսին բազկացը օգնութեամբ ե-
լաւ նստեցաւ, և Գրիթնեցու իր աղջկանը
կուրծքին վրայ . և անգամ մը աչուքները սեն-

եակին չորս դին դարձնելով իբր թէ մէկը կը փնտռէր, մարած ձայնով մը հարցուց « ուր եմ ես . ի՞նչ են այս եղածները » — « իմ բազուկներուս մէկն ես սիրելի հայր իմ » պատասխանեց կոյսը « իմ բազուկներուս մէջը որ իրենց ուժը քեզի կը պարտեն . և եղածները Երկնից քեզի տալիք վերջին ազդարարութիւններն են » հիւանդը թափեցաւ և իր աղջկանը խօսքերէն ազդուեցաւ , բայց աղէ մէկէն հպարտութիւնը իր տեղը բռնեց . . . « աղջիկ » ըսաւ թշուառականը « ես Քրիստոսի և Աստուծոյ չեմ կրնար հաւատալ այդ բանը ինձ համար ընելը անհար է , ալ ժամանակը անցած է . և ես իմ կէս գիշերիս հասած եմ , » — « բայց հայր Երկնից ողորմութիւնը չափ չունի » — « այդ ինձ համար չէ » պատասխանեց հիւանդը « ալ ես դատապարտուած եմ » այս ըսաւ և այլանդակ հանգամանքով մը ցնցուեցաւ , կապուա քող մը ծածկուեցաւ դէմքին , և դողդողալով գոչեց « ուր էր որ բնաւ ծնած չիլինէի » և անշունչացաւ :

ՀՀամեմատելով անաստուածին վախճանը , ով որ չի սոսկար այսպիսի վախճանէ մը թող յարատեւէ իր զազիր ուրացութեան մէջ . մինչև որ իր « կէս գիշեր » հասնի » :

Արմենակ Հ. Զիգմանեան :

ԱՌԳԵՅԻՆ ՏԵՍԵՐԵՆ

ԵՒ

ՄԵՂՈՒ

« Երբ ոչխարը չի գտնեմք
անշուշտ այժով գոն կ'ըլլամք » :

Երբ նման եթէ Ազգային Տեսարան մը չունենալու տարաբարութեան ենթակայ եղած եմք , հոգ չէ գտնուածովը գոհ լինիմք . ի՞նչ պիտի նուիրէ մեզի Ազգային Տեսարան մը , մեր նախնիքը պիտի ներկայացնէ մեզ : Ահա հայոց պատմութիւն ունիմք , մեր ներկայ կացութիւնը պիտի բարելաւէ , և բարեկարգէ , ահա այդ նպատակաւ շնորհուեցաւ մեզ Ազգային Սահմանադրութիւն մը , մեր մտքերը պիտի լուսաւորէ . ահա Ազգային օրագիրներ , աշխարհիս ներկայ անցքերը մեզի պիտի ստորագրէ . ահա Ազգային լրագիրը , դիմախօսութեան փափուկ դարձուածքներովը զմեզ պիտի զմայլեցնէ . ահա

Խմբագիրը իրենց վեճաբանութիւններովը նոյն զմայլումը մեզի կուտան , և վերջապէս զմեզ խնդացնելու համար Միմոս մը պիտի ներկայացնէ . ահա անոր տեղ ալ Մեղուն , որ Ազգային տեսարանին վրայ իր բոլոր վարպետութիւնը ի գործ կը դնէ հասարակութեան ծիծաղը շարժելու համար , և ահա վերջին անգամ ալ նոյն դիմումներ իր խայթոցովը գլուխը ուռնցուցած Արեւելեան Դարը կունակը առած տեսարանին մէջ ներառեցու* . . . ուրեմն կեցցէ . պրաւօ , ֆօրի , վեզ . . . և ծափահարութիւն . . . մեզի ալ խնդարու առարկայ մը պէտք է , մէյ մըն ալ թող ելէ :

Եւմք ուզէր առանց խորհելու անցնիլ թէ արդեօք Ազգերնուս ներկայ կացութիւնը ար խուր և միանգամայն միթարիչ տեսարանի մը կարօտ է , թէ չէ կատախարանական տեսարանի մը : Ազգասէր և միանգամայն խոհական անձ մը չի կրնար այնքան վտտ լինիլ որ Ազգերնուս սա փոսպտո կացութեան միջոցին՝ կ'արտասուէ . Մեծ անդգայութիւն պէտք է որ փոխանակ Ազգային տխուր վիճակը ողբալու , խեղկատա կաբանութեան կամ լաւ ևս է ըսել խեղդործութեան պարապի . . . Մեղու սթափէ մէյմը , և ի սէրն Ազգիւ խելքդ գլուխդ բեր և փոխանակ . . . Եւմք ուզէր անգամ մըն ալ քու վրայ դարձուր , և տե՛ս թէ ի՞նչ անստորագրելի , անօրինակ , և զգուշ լի վիճակի մը մէջ ես . ողորմեր երկինք որ լուսաւորուէր մտացդ աշուրները , և տեսնէիր թէ դու ողբան հեռի ես Ազգասիրութենէ :

Արմենակ Հ. Զիգմանեան :

ԱՌԳԵՅԻՆ ԵՐՈՒԹԻՒՆ

Արեւելեան Դար ընթերցող Յարգի անձանց կիմացունեմք՝ որ Արեւելեանը այս 12 թի ներկայ թուովը՝ իւր առաջին շրջանը կը լրացնէ , և կը պատրաստուի երկրորդ շրջանին :

Ուստի այս առթիւ երկրորդ շրջանը ձեռք չառած՝ հարկ է մեզի քանի մը դիտողութիւններ ընել անոր անցեալին մէջ ունեցած և յառաջակայիւ ունենալու ընթացքին վրայ . որպէս

*Զարմանք չէ որ Իշամեղուի մը խայթոցին ենթակայ եղած գլուխ մը այդչափ ուռի , ասիկայ բնական բան մըն է :

Թէ մարդ մը բազում ժամանակ օտար աշխարհք ճամբորդութիւն ըրեր, և այն ճամբորդութեանց մէջ կերպ կերպ վշտերու հանդիպած՝ այն ճամբաներուն, այն քաղաքներուն և այն տեղերու բնակչաց բնաւորութիւններուն վրայ տեղեկութիւններ ստացած ամեն կերպիւ փորձառու եղեր այն բաներուն՝ որոնք ինք անձամբ օրերով, շաբաթներով, ամիսներով, և երբեմն տարիներով ձեռք շոշափեր, աչք տեսեր ու ականջօք լսեր է. և եթէ նորէն հարկ ըլլայ նոյն տեղերը երթալ՝ ի հարկէ կարելի եղածին չափ այն շոշափածին, տեսածին ու լսածին համեմատ պատաստութիւններ պիտի տեսնէ. այսպէս Արեւելեանն ալ այս վեց ամսեայ կարճ շրջանին մէջ բաւական վշտերու հանդիպելով՝ բազում բաներ շոշափեց, տեսաւ ու լսեց, ու անոնցմով շատ մը օգտակար կամ ֆնասակար տեղեկութիւններ առած՝ ամեն կերպիւ փորձառու եղաւ այն բաներուն՝ որոնք պիտի կրնան օգտել իւր նպատակին: Ուրեմն հարկ կ'ըլլայ որ Արեւելեանը այս յառաջեկայ շրջանին մէջ անցեալը ձեռք առած՝ առանց իւր էական նպատակէն սահելու. (որքան կարելի է) այն շոշափածին, տեսածին ու լսածին յարմար քանի մը փոփոխութիւններ կրէ այն կերպիւ՝ որոնցմով աւելի նպաստամատոյց ըլլայ սիրելի Ազգին, և իւր բարեմիտ ընթերցողացը:

Սակայն այս ըլլալու փոփոխութիւնները չեցրցուցած՝ անոր իսկական նպատակին և անցուցած վեցամսեայ վիճակին վրայ համառօտ հետադարձութիւն մը ընելը պատշաճ կը դատեմք, անոր դէմ յուզուած ծուռ և սխալ դատողութեանց համար:

Արդ կարծեմք Յարգոյ ուղղամիտ անձանց յայտնի է թէ՝ Արեւելեան Գարին բուն նպատակը ինչ էր, և ինչ բաներ հետադրուել էր աւոր միտքը. արդեօք այս վեցամսեայ շրջանին մէջ իւր նպատակին ծառայեց, և այն բաներուն համեմատ վարուեցաւ, թող առանձին իւր խիղճը և հրապարակաւ անոր թերթերը վկայեն: Աղէ ինչ էր նպատակը և ինչ բաներ էին անոր մէջ պարունակուած նիւթերը, քննելը նայինք թէ պիտի համեմատուին. Ի հարկէ Արեւելեանի առաջին և երկրորդ թիւերուն մէջ տեսնուած Ազգերը կարգացեր են ամեն անոնք՝ որոնք որ լսեր էին անոր անունը, իսկ արդ կարծեմք այն ազգաբարձութեանց մէջ յայտնապէս ցուցուած էր թէ՝ իւր նպատակը մի միայն Ազգին բարեոյն

ծառայել, անոր օգտին աշխատիլ, և այնպէս ինքզինք նուիրել էր այն բաներու՝ որոնցմով Ազգը կրնայ օգուտներ քաղել. և մինչև անգամ ինքզինք զոհել (ինչպէս որ արդէն զոհած է) այն կերպ իրողութեանց. որոնք ամեն վայրկեան Ազգին գլխուն (գաղտնի և յայտնի) ֆնասներ պատճառելէ չեն դադարիր: Ահա Արեւելեանին նպատակը, և ի սրտէ փափաքը. և ով կրնայ յանդգնիլ ըսելու թէ՝ — Արեւելեանի նպատակը չար է, և անոր ընթացքը ֆնասակար — Բարի, աղէկ. ուրեմն նայինք թէ Արեւելեանը վեցամսեայ ընթացքին մէջ յիշեալ բարեոյն հետեւեցաւ:

Այս մասին մենք լուեմք, թող ազգին մէջ գտնուող արդարադատ, եւ ճշմարիտ Հայ սրբտերու տէր անձինք՝ մտադրութեամբ կարդան անոր առջի թիւէն մինչև այս վերջին թիւը, եւ այնպէս ազգասիրական ներքին զգացմամբ չափեն զանոնք ու նային թէ կը համեմատուին այն բաները իր նպատակին: Աներկբայ եմք մենք մեր կողմէն եթէ մեր ըսած կերպերովը հայերու ըլլան՝ անշուշտ պիտի տեսնեն թէ Արեւելեանը իր խօսքին՝ ժամանակն ու պարագան ներածին չափ որքան կարողացեր՝ գործով հետեւեր է:

Բայց ասոնցմով ըսել չենք ուզեր թէ Արեւելեան Գարը իւր այս վեցամսեայ շրջանին մէջ պակասութիւններ չէ ունեցած, եւ կամ այսուհետեւ պիտի չունենայ, քաւ լիցի. ոչ երբէք այսպիսի սնտառական խօսք մը մտքերնուսան կիւնէն անգամ կրնամք անցընել եւ կամ այս կերպ դիւտարան դիտում մը ունենալ, քանի որ զայն շարադրողը մարդ է, եւ Սողոմոնի, Պրդատոնի, Պենեդոնի, եւ այլ ասոնց նման երեւելի անձանց աշակերտներէն չէ, այլ երբեմն սխալած է կը սխալի, պակասութեան մէջ գրտնուած է եւ կրնայ գտնուիլ. բայց այս սխալ մոռնքներն ու պակասութիւնները մի՛ երբէք կրնան ֆնասել՝ ոչ Ազգը ոչ Ազգին պատիւը, ոչ ուսումնական դասը եւ ոչ անոնց յարգը, ոչ հասարակութիւնը՝ եւ ոչ զայն ընթերցողաց մէկ անհատը:

Հապա ի՞նչ է Արեւելեանի Բարեւոյն պակասութիւնները, եւ ի՞նչ բանի համար այն՝ Ազգին ուսումնական մասին ումանց հաճոյ չերեւաց պէտք է քննել: Բայց մեզ, եթէ չեմք սխալիր, անոր շարադրութեան բարձր չըլլալուն, եւ ոճը հասարակ ընթերցանութեան յարմար պարզ եւ

դիւրիմաց լինելուն համար է անոնց այնքան դժկամակիրը։ Թէ որ ասոնք են, (ի հարկէ ասոնք ըլլալու են զի ասոնցմէ ՚ի գատ իւրենց վերաբերեալ էական բան մը չի կայ), նախ թող ներեն այն անհիւ Պարոնները թէ՛ ասկէ աւելին ընելու կարողութիւնը չէ շնորհեր այն Արկնաւորը իւր այս հողեղէն նուազ տարածի, երկրորդ, ըսենք թէ կարենար անգամ, դարձեալ չի կրնար պիտի ՚ի գործ դնել, վասն զի Արեւելեանը յորինողին նպատակը, ոգին ու ջանքը այս մասին իւր անձնական շահն ու պատիւը մտածել չէ, այլ Ազգին, քանի մը անձանց օգուտը խորհիլ չէ, այլ ընդհանուրին, այն մէկ քանի ուսումնական հպարտ եւ գոռոզ անցանց ո՞՞, շարադրութիւն հաւնեցնել, կամ զերեւել, զուարճացնել չէ, (որոնք որ Հայերէն լեզուաւ բառ մը անգամ արտասանել չեն ուզեր, քանի որ իրենց գրատուները Պաղկերէն ու Անգղերէն բազմաթիւ գրքերով միայն լեցուած է, եւ շատ մը օրագիրներ՝ որոնց բաժանորդ ստորագրուած են), այլ միայնակ համբռն ընթերցասէր Հայ հասարակութեան հաւնեցընել, ու զանոնք դո՛հ ընել է անոր մշտնջենական փափաքն ու եռանդը։

Ահա Արեւելեանի այս առաջին եւ վերջին փորձը համարուած պակասութիւնները եթէ է. բայց կարծեմք այսպիսի անտեղի, չնչին, ու տղայական պակասութիւնները ինչպէս վերը ըսինք ոչ Ազգին եւ ոչ Ազգին մէկ անհատին ամենեւին չի վնասեր։ Ասոնք պակասութիւնք Արեւելեանի, անգամ մին ալ անոր բնական սր խալմունքները աչքէ՛ անցունեմք ու նայիմք թէ՛ որքան վարհուրելի վնասներ պիտի պատճառէ Ազգին կամ հասարակութեան։ Քննեմք։

Արեւելեանը երբեմն սուտ լուրեր կը հրատարակէ եղեր, չէ սուտ. այլ ստութիւնը խայտառակել, ճշմարտութիւնը յայտնել, ստախոս է խաբեբայ Անանիաներն ու արդարեւ առաքիւնի Յովսէփները ճանչնալ եւ Ազգին ճանչցընել, ու անոնց չար եւ բարի գործերը հրապարակաւ երեւան հանել է անոր միտքը։ Օր օր ինտիկ մէկը գայ ըսէ թէ՛ սա գործը նանկ է եղեր, նա գործը սանկ. մէկը ազգին մէկ բանը ծախսեր՝ մէկալը առեր կերեր՝ Արեւելեանը մըտիկ կընէ, կը հարցունէ, կը փնտրուէ. եթէ գործին մէջ, օգուտ եւ ՚ի վնաս Ազգի բան մը կը տեսնէ, կամ թէ անոնց մէջ Ազգին առաքիւնի անհատի մը անձնական պատուոյն դայելու եւ

րեւելի իրք մը կը շօշափէ՝ շուտ մը Արեւելեանը զայն կը հրատարակէ։ Հետեւութիւնը։ Բարի։

Ինչէ՞ն, վասն զի քանի մը օրէն կը նայիս՝ որ այն խաբեբայ ստախոսը խայտառակութեամբ ծախէ ծուկ կը փախչի, եւ այնպէս Ազգին գրիգռիչները կը յայտնուին ու բարերարները կը ճանչցուին, եւ փոխանակ սրճարանները, գիւնեւորները չարաչար բամբասուելնուն՝ հրապարակաւ դոկութեանց ենթակայ կ'ըլլան, եւ այն բաներն ալ իրենց ուղղութիւնը կը գտնեն։

Ահա Արեւելեանին սուտ լուրեր հրատարակելուն պտուղները, ինչպէս որ իրօք ալ տեսնուեցաւ այս առաջին շրջանին մէջ։ Սխալ տեսլան։

Արեւելեանը քերականական մեծ սխալութեան մը ենթակայ է եղեր, այսինքն Ալին տեղ Էյէ դրուեր, տեղ մը Ն գիրը պակաս ու, Օւն պէտք չէ եղեր, (') պարոյկին տեղ (') երկար, (') բութին տեղ (') ստոր կը դրուի եղեր. սա բառը առաջ, նա բառը ետեւ տրուիլ հարկ է եղեր. և այն և այն. ու ասոնց նման խել մը բառի, տառի, հնչմունքի, խօսքի սխալներ ալ կը գտնուին եղեր, դեւ հաղարէն մէկ պակաս աւելի էլէլէլ։ (Պուգես նէ հաւտա։)

Յիրաւի սխալ, բայց իրաւ, սուտ, ան մէկ

դի. արդեօք եղածները մարդկային տկարութեամբ, տպագրական անգողշութեամբ, չեղած եւ չըլլալով սխալմունքներ, ան ալ մի հարցընէր, այլ բաւական է որ Արեւելեանին մէջ սխալմունք մը տեսնուեր։

Բայց այս ձայները ուրիշ է. զի բարեմիտ հասարակութիւնը անոր մէջի նիւթին խակութիւնն ու բանին էութիւնը կը նայի, Եւ Օւն իրենց համար պիտանի չէ. այլ ըստ մեզ՝ այն անհիւ ուսումնական մասին կողմէն եղած արձագանք մըն է. ուրեմն այս ալ դնեմք վերոյ յիշեալ անոնց վայրը բրած քննութիւններնու կարգը։ Սխալ երկրորդ։

Այլ ի՞նչ կը մնայ անդին, կարծեմք ոչինչ։ Բայց կայ եղեր զանգատ մը ևս, ու ամենամեծ զանգատ. այսինքն Արեւելեանը Պապականութեան ու Ռոյալականութեան դէմ կը զինի, և այս նպատակաւ եկած նիւթերը ընդունելով կը հրատարակէ եղեր։

Այս կը հրատարակէ և պիտի հրատարակէ, կը զինի և պիտի զինի։ Ի՞նչ կելլէ ասկէ. այս ալ մի պակասութիւն, աս բա՛նա ալ սխալմունք մըն է եղեր։ Օւրմանք։ Արեւելեանը

Ի՞նչ ազդե է, ՀԱՅ. Արօնքով, ԱՌԻՍԸ. ԻՌԶԱՍԸ. Պապականնէրը, Բողոքականնէրը Հայոց Ազգային միութեանը և Արօնքին սատարի թշնամիները, մէկը ամեն ատեն յայտնի միւսը երբեմն գաղտնի*. Երդ Արեւելեանը Ազգաւ և Արօնիւ Հայ, իւր իսկապէս նպատակն ալ Հայոց Ազգութիւնն ու Արօնքը սատակապէս պաշտպանել ըլլալով, և այն թշնամիներն ալ դեռ՝ այս բաները քննած տոնենիս իրենց՝ թըշնամութիւնները ձեռաց տակէն ի գործ դնելու որ ըլլան նէ. Ի՞նչ ընէ Արեւելեանը, անտարբէր կենայ, չի՞ խօսի, լռէ՞. քաւ լիցի. երբեք չի կրնար այսպիսի վատութեան մը հետեւիլ. քանզի Արեւելեանը ճշմարտապէս Հայ է, իսրտէ կը խօսէ Ազգը, ամբողջ կը յարգէ կրօնքը ու կը պատուէ իր ճշմարիտ Հայեղբայրները, ուրեմն հարկ է որ այս բաները գործով ալ յայտնէ, այսօրն Հայոց ազգութեան ու Արօնքի թշնամիներու յարատեւած անիրաւութիւններուն դէմ

*Խորհիլ արժան է որ՝ այս երկու ցեղ Հայոց բշխմաններուն ըրածը մի է. եւ նոյն կոչումով է. մի է. նոյն հոգով չէ. մէկին ծանր, միւսին քեթե. մէկին ներքի, է. միւսին անցերքի. Մէկին ներքի՝ վասն զի կարելի է որ ներքին համոզմամբ ըրած ըլլայ, իսկ մէկային անցերքի՝ վասն զի սրնափառութեան հոգի մը կայ միայն մեջ տեղը: Յաւայի է մեզ ըսելը որ՝ մէկը զժաղողաբար կարողիկէ ճշմարտութիւններէ բոլորովին գուրկէ. դաժ ատեն կը բշխման Հայոց ուղղափառ. եկեղեցին. իսկ մէկայը կարողիկէ ճշմարտութեանց մեջն կը վրաւորէ նոյն կարողիկէ Հայ գաւազաց սրտերը. ուստի մէկին ըրածը ըստ աշխարհի է. ըստ մեզ ներքի կրնայ համարուիլ, ըստ որում իրենց հաւատոյ մասանց դրութիւնները՝ բոլորովին հակառակ է՝ Հայոց Հաւատոյ դրութեանը, է. նետեաբար՝ կան աշխարհի վրայ այնպիսի հաւատոյ դրութիւններ՝ որոնք Բրիտանոքեան սկզբունքները կը մերժեն, բայց չեն վնասեր գշաց լիցեղեցին, որով է. չեն դժկամակիր Հայերը զի անոնց դրութիւնները իրենցմէ խիստ տարբեր է. ներքին համոզմամբ է. իսկ մէկային ըրածը բշխմանութիւնները չէ ներքի է. չի կրնայ պիտի ըլլայ՝ քանի որ երկու կողման հաւատոյ գլխաւոր մասունքները համեմատ են՝ ըստ վարդապետութեան Կարողիկէ եկեղեցոյ, է. զիրարմէ բաժանող կէտը միայն Կրօնութեան է. Փորձութեան վատ խնդիրն է, քոյ այլ է. այլ անհմատութեանը՝ որ յիշեալ խնդիրէն անաջ եկած բաներ են: Ուրիշ ատեն ասոր վրայ ընդարձակ պիտի խօսիմք, զի ատենիս պարագաները կը պահանջեն:

Հոս այսքանը յիշելուս պատճառը սա է թէ յիշեալ երկու կերպ Հայկական բշխմաններուն Հաւատոյ մասանց վրայ ունեցած տրամադրութիւնն ալ է. այլ ըլլայ յայտնելով, մեր այս մասին գրութեանց կերպ կերպ անհիմն կարծիքներս են. քակալ չըլլան:

ամեն ատեն զինեալ պատրաստ լինի, պաշտպանողական դիրք մը միայն բռնելով: Ետնք այս պէս զիմնալով՝ այն անիրաւները որքան որ ուղեն՝ գանգատներ արձրկեն, կարող եղածնուն չափ մեղադրանքներ տեղացնեն անոր գլխուն վրայ: Արեւելեանը աղէկէն աղէկ փորձառու է այս մասին հիշողով ալ, հոգով ալ, Կրօն ալ տեղեակ է, ըրածն ալ զիտէ ընելիքն ալ. անսնկ ազգամիաս և ազգակորուտ գանգատները, մեղադրանքները բնաւ չի լսեր ու մտիկ չընէր, այլ առաւել կը պարտաւէ և կ'արհամարհէ, քանզի լաւ գիտէ և համոզուած է թէ՝ այս կերպ ձայները ինչ հոգի է և որ սրտերէ առաջ կուգան... Ժամանակը պիտի յայտնէ: Բայց նայինք ասոնք ով և որ ցեղ Հայերն են որ այս մասին կը յանգնին Արեւելեանը բամբասելու, և անոր աս ընթացքը իբր անհիմն սխալմունք մը համարելու: Չարմանք պէտք չէ, յայտնի է թէ՝ նոյն ուսումնական և Կրօնական Հայ Պատուելիներ, և անոնց ցեղէն առաջ եկած նոր Կրօնականներն են:

Ուրեմն այս ալ առաջիններուն կարգը դասեմք:

Սխալմունք Արրորդ.

Դեռ ևս ծանծաղական գանգատ մըն ալ կայ, որ Արեւելեանը յորինողը քնարերգու է եղեր, ասոր համար արժան չէ եղեր այս պաշտօնը վարելու. և յիշուի այս գանգատը բաղուտ անգամ թէ խօսքով և թէ գրով տեսնուեցաւ. իբրեւ անձնական նախատիք մը անոր: Նախատիքն է, գանգատ, որով դէմ: Գանգատ. վասն Արեւելեանի. նախատիքն է վայն յորինողին. ինչո՞ւ. այս ինչ պակասութիւն, ի՞նչ կերպ սխալմունք: Բսենք թէ մինչեւ ասա տեսնուած գանգատներուն հետ մէյմէկ կերպ (անիրաւ կամ թէ իրաւացի) հայթայթանքներնին ալ ցուցուեցաւ: Ետնք ինչ ըսեմք, ի՞նչ կերպ արւամարտեմք կամ փաստաբանեմք: Պակասութիւնն, ոչ երբեք. վասն զի Քնարերգութիւնը Արեւելեան յորինուելուն հետ յարաբերութիւն մը չունի: Սխալմունք, ամենեւին. Արեւելեանը Քնարի ձայնէն չի շփոթի. հապառուրեմն ի՞նչ է: Աեցիր որ ըսեմք: Սայէնին ըրածը ի՞նչ էր եղբորը Բեյլին դէմ. նախաձուլութիւն. ինչո՞ւ, քանզի Սայէն կը հալածէր արդարութիւնը, իսկ Բեյլը կը պաշտպանէր վայն, եւ ասոր համար արժանացաւ Արդար անուանելու: Լսեց Սայէն այս ձայնը եւ իր նախաձուլ

ձու ողին կրկնակի շարժեցաւ, խորհելով թէ ինք անոր կրտսեր եղբայրը ըլլալով Չար ան-
ռւանեցաւ, իսկ Աբէլը Բարի, ուստի ասով
չափէ դուրս զայրացաւ, եւ իւր ատելութեան
չար կիրքը արթնցած՝ բոլոր զօրութեամբ յար-
ձակեցաւ անմեղ եղբորը վրայ, եւ ձեռքը գրա-
նուած իշու ծնօտով զայն սպաննեց . . .

Ահաւասիկ սոյն օրինակովս կատուգուի վե-
բոյիշեալ դանգատը այս սկզբունքէն առաջ ե-
կած բան մը պիտի ըլլայ. քանզի Արեւելեանը
ներքին զգացմամբ միշտ Ազգին ճշմարիտ բար-
ւոյն ծառայելու յօժարութիւն ցըցուցած՝ ըստ
կարողութեան գործով ալ յայտնած ըլլալով,
եւ ամենեւին մարդահաճութիւն կամ կողմնակ-
ցութիւն չընելով, եւ բարեբաղդաբար բարե-
սիրտ Ազգայնոցը կողմէն բաւական համակրու-
թիւն մըն ալ ստանալով՝ ահա այս բաներս ի-
րեն կրտսեր եղբայրներու ումանց չար նախան-
ձը շարժելուն առիթ մը տուած պիտի ըլլայ, եւ
տոնոցմով իրենց եղբայրական կեղծ սէրը շու-
տով ատելութեան դարձուցած՝ այս նորածին
եղբայրնին թէպէտ եւ մեռցնել չէին կրնար
նէ՝ գոնէ այսպիսի դանգատով մը անոր անունը
կեղտեղելով՝ զայն յօրինողին ալ նախատինք մը
տալ ուզած պիտի ըլլան. Այն կուրութեանս,
ահա գործ Այլեւի: Դժբաղդ Հայոց Ազգ,
դեռ քու մէջէդ այսպիսի Այլեւներու ու Ա ա-
ռակներու տեսարաններ չի՞ պիտի պակսին: Ինչ
յիշաւի այս մասին շատ բաներ կրնայինք ըսելու՝
եթէ ինչպիսի անձնական չըլլար. արդ թէ այս
պատճառաւ թէ Արեւելեանին եւ թէ անոր յօրի-
նողին դէմ եղած այս անիրաւ գանգատին ինչ
հոգիէ առաջ գալն ալ տեսնելով՝ այժմ այսքան
խօսքը բաւ համարիմք: Միայն թէ անանկ մար-
դոց անխոհեմութիւնը բարեկամաբար իրենց ի-
մացընելու, եւ կերպիւ մը զերենը զարմացընե-
լու համար՝ Դաւթի Մարգարէին պատկերը
կը յուղարկեմք, որ ինչպէս Դաւթի թագա-
ւորական պատմութեաննորովը գահը նստած, քո-
վը արքունական գաւազանը. ձեռքը՝ ԲՆԱԲ
մը նկարագրուած է. թող աղէկ նային Դաւ-
թի վրայի զարդերուն, թագաւորական փառ-
քին, եւ ձեռքի ԲՆԱԲին վրայ ու կարմրին:

Եթէ՝ Արեւելեանը յօրինողը իւր գտնուած
յետին նուաստ վիճակովը՝ ձեռքը տեսնուած
այն Բնարը իւր անձին եւ այս գործոյն նախա-
տինք մը կը բերէ, այս նախատինքը աւելի Դաւ-
թի կիցնայ, ըստ որում յիշեալ պատկերին ներ-

քեւ «Բնարերգու Մարգարէն Դաւթ
գրուած է:

Հետեւաբար ըսել կ'ըլլայ որ այն տխմար-
ները կուրաբար՝ Բաղաամի պէս անիծեմ ըսել-
նին՝ բերններէն ելած փառաւոր օրհնութիւնը
չեն գիտեր: Աւրեմ թող նախատուի Արեւել-
եանը, որ այս կերպ պակասութեանց ու սխալ-
մանց ենթակայ է եղեր: Այս ալ անցնիմք:

Այժմ կը մնայ վերջնական գանգատ մը, որ
ընդ քիչ մնաց Արեւելեանը վասն արդարութե-
չար կիրքերու զոհ պիտի ըլլար, իբր թէ Արե-
ւելեան Դարը միայնակ իր շահուն, իր օգտին
եւ իւր անձնական կիրքերը յագեցընելու համար
կը հրատարակուի, եւ ասոր համար մասնաւոր
անձանց դէմ կը հակառակի ու կը կուրտի ե-
ղեր: Աստի ասոնցմով հարկ է եղեր որ զայն
յօրինողը Տէրութեան եւ Ազգային դատաստա-
րաններու մէջ դատուի, յանցաւոր վճռուի, ու
այնպէս զինքն ալ Արեւելեանն ալ պատժուի:
Մանրութեան իրաւութիւնք եւ զրկարտութիւնք:

Այս բանս չէ այնքան զարմանալի որքան որ
ծաղրելի: Աղէկ որ Արեւելեանը հինգ, տասը,
քսան օրինակ չէ եղեր որ այնպիսիներուն ձեռ-
քը անցած՝ երէին, մըրկէին, ու փոշններն ալ
յօգս ցրուէին, որ այս անիրաւ գանգատներնին
տեղը մը ունենար: այլ հարիւրաւոր օրինակ-
ներ ցրուած ըլլալով Հայ հասարակութեան մէջ,
որոնցմով կրնայ ամեն մարդ յայտնի տեսնել ու
որոշել թէ՛ որո՞նք են եղեր այն անձնական շահ,
օգուտ եւ կիրք յագեցընելները, եւ կամ որ մաս
նաւոր անձանց դէմ անձնական ատելութեամբ
մը անիրաւ տեղ հակառակիլ ու կուրտիլներ
եղեր է: Թող ցըցունեն, իմացունեն եւ հրա-
պարակաւ հրատարակեն որ մենք ալ եւ ուրիշ-
ներն ալ իմացած՝ անոր յարմար վարուիմք, բայց
չէ, անանկներունը միայն խօսքով է, գործքով
ոչ երբէք: Իսկ մենք այնպիսի կեղծ զոյցներն
ու սխալ դրութիւնները հիմնովին մերժելով բա-
ցայայտ կ'ըսեմք թէ՛ Արեւելեանը այս Ա եղամ-
սեայ շրջանին մէջ նիւթապէս եւ բարոյապէս
անձնական բազում զոհեր ըրաւ, եւ այս միջո-
ցիս այն կերպ բաներ հանդիպեցաւ՝ որ բաց
ի բաց իւր անձնական պատուոյն ու շահուն կը
վնասէր, ուստի պատուոյ դպչելու մասերուն ըստ
հարկի քանի մը խօսք արձրելովը զոհ եղեւ,
իսկ շահու մասերը բոլորովին իսէր եւ յօգուտ
Ազգի զոհեց եւ պիտի զոհէ:

Ա ուրեմն բաւ է, դադարեն ու վերջացը-

նին անոր դէմ ասդիս անդին յարատեւած աւմենասատարի թշնամութիւննին. իսկ եթէ չեն դադարիր, չեն վերջացըներ, զիտցած ըլլան որ Երեւելեանն ալ զիրենք ճշմարիտ Հայ չի կրնար ծանչնալ, եւ իբրեւ օտար մէկը կը վատահամբաւէ, եթէ թշնամութիւննին անիրաւաբար շարունակեն. զի Երեւելեանը ինչ որ ալ է նէ՛ սա ճշմարիտ է որ ինքըղինք Ազգին նուիրած է, եւ անոր օգտին պիտի ծառայէ, ըստ որում «Ազգ իմ աչք իմ» ըսող եւ գործով ալ ցըցունելու ջանացողներէն է, եւ . . . ալ գոցեմք Երեւելեանի պատկանեցող ու պատկանող զուները, վասն զի մենք գրեթէ ձանձրացանք, բաժանորդները մոխիկ բնելէ:

Արդ կարծեմք մինչեւ աստ ըրած հետազօտութիւններէն ըստ բաւականի խնացուեցաւ թէ՛ Երեւելեանը իւր այս առաջին շրջանին մէջ ինչպիսի վիճակ, եւ ինչ կերպ ընթացք մը ունեցեր է, եւ ինչ են եղեր այն շօշափած, տեսած ու լսած բաները, եւ դեռ բազում՝ որ այժմ հարկ չէ խօսիլ:

Եւ արդ սակաւիկ մի ներողամիտ ըլլան բարեմիտ Նիքերցողք. որ այսքան երկարեցինք մեր հետազօտութիւնները, բայց եւ այնպէս հարկ էր միանգամ ընել, որպէս զի նախ Երեւելեանին նպատակը լաւ մը պարզելով խալըսեմք այնպիսի չարախորհուրդ անձանց ծանկերէն, երկրորդ՝ ամեն ատեն նոյն բաներու վրայ ստէպ խօսելու չի հարկաւորիմք, եթէ հարկը ստիպէ անգամ՝ մեր այս Ազգարարութիւնը ճակատնին զարնելով լռեմք: Երանի է թէ Երեւելեանը այս երկրորդ շրջանը յաջողութեամբ յարատեւելով՝ այսպէս վերջի թուոյն մէջ այս կերպ բաներու վրայ հետազօտութիւններ ընելու չի հարկադրելինք:

Եւ արդ ըստ խօսից մերոյ կը մնայ Երեւելեանի այս յառաջիկայ Շրջանով կրելու քանի մը փոփոխութիւնները ծանուցանել, որ յաջորդ թերթին մէջ պիտի տեսնուի:

ԱՄԵՆ ԿՑՈՒԹԻՒՆ

Եկայք օրհնեայք Հօր իմոյ ...
զի՛ ի բանտի էի եւ եկիք առիւստ ...: Ս. Ասետարան:

Մարդիկ որքան լուսաւորուին, որքան յառաջանան, տակաւին խիստ ետ մնացած են, եւ

թէ չեն ուսած կարեկցութեան աշակերտ ըլլալ: Վարեկցութիւնը այնպիսի յատկութիւն մըն է որ՝ եթէ տարածուի սա վայոց ձորին մէջ, աշխարհս խիստ զարմանալի կերպով կը փոխուի, եւ կըլայ երջանկութեան հովիտ: Բայց Աստուած մի արասցէ՛ եթէ այս յատկութիւնը վերանայ աշխարհէս, ահա անմիջապէս բոլոր տիեզերք սեւ կ'զգենուն եւ Արկինք կը տխրի:

Ճշմարիտ կարեկցութիւնը ան է որ՝ մարդն չէ թէ միայն իր ընկերին վշտերուն վշտակից, այլ նաեւ անոր ամեն մէկ նեղութիւններուն պաշտան մը գտնելու համար իր կարողութիւնը՝ ի գործ դնել է: Շատերը կան որ մինչեւ ցարդ համբաւ ստացած են իբր ազգասէր, մարդասէր, աղքատասէր և այլն. բայց եւ այնպէս եթէ ճշմարտասիրաբար քննեմք անոնց գործերը՝ բոլորովին ընդհակառակը կը գտնեմք զիրենք: Խիստ տարբեր տեսակ Աղքատասիրութիւն են, աղքատ մը լիովին աղքատութենէ հանելը, եւ կամ չքաւորի մը առջև պատառ մը սեւ հաց նետելը. ասոնց առջինն է՝ ճշմարիտ Քրիստոնէական աղքատասիրութիւն. իսկ ետքինը՝ կատարեալ անգրթութիւն: Երանի անոնց՝ որոնք ճշմարիտ աղքատասէր են եւ ողորմած. իսկ վայ անոնց՝ որոնք տենջանք մը ունին այս կատարեալ առաքինութեանց միայն խօսքով տէր ըլլալ ու ծանչցուիլ, եւ գործքով ոչ երբեք:

Արդ որքան հաճելի է մեզ այս անգամ յիշել հոգ որ աշխարհիս սա նեղ միջոցին մէջ դեռ ազգերնիս զրկուած չէ ճշմարիտ Աղքատասէրներէ, որոնց մէկ սքանչելի՝ միանգամայն քաջալերիչ օրինակը ահա Սարգաթի խանի Ազգասէր ընկերութիւնը մեզի կը ներկայացընէ:

Արդարեւ կը տեսնեմք որ այս բարենպաստ ընկերութեան ազնիւ անդամները մէկ կողմէն Ազգասիրութեամբ, միւս կողմէն աղքատասիրութեամբ բոլորեքեալ աճապարելով մը կը դիմեն Տէրութեան բանտերուն՝ այն տխուր տեղերը գտնուած խել մը թշուառ բանտարկեալներ խալըսելու, ազատելով գանոնք իրենց ցաւալի պարտքերէն. խրկելով զիրենք միսիթարուած եւ ուրախ իրենց եղիլի եւ թշուառ ընտանեացքով, որոնք գուցէ յետին ասալիճան դժնդակ թշուառութեան մէջ ինկած անօթի եւ ծարաւ, մերկ եւ անմխիթար, ամեն օր ամեն վայրկեան կսպասէին իրենց հօրը, եղբօրը եւ ամուսինին, որոնք անգութ պարտասիրաց ձեռք իրենց քօվերէն յափշտակուած ու բանտերը գոցուած են,

և հոն իրենց ամենակարևոր ժամանակը կը վատնեն : Ուրբան սոսկալի է խորհիլ մէյմը թէ՛ քանի՛ քանի ընտանեաց անտանելի և անստորագրելի թշուառութեան մէջ ընկղմիլը ոչ այնքան ուրիշ պատճառներով յառաջ կուգան՝ որքան որ ընտանիքի մը ամենակարևոր մէկ անձին գազանաբարոյ պարտաւիրաց միջոցաւ բանտը նետուելէն , քանի քանի հիւանդ ընտանիքներ՝ իրենց կենաց թեւէն կը խտրուին առանց տեսնելու այն անձը՝ որ զերենք ապրելոյն համար պարտական ինկած ըլլալով բանտարկուելու դատապարտուած է :

Ի՛հ չեղրկնցնեմք խօսքերնիս . . . բայց դառնամք խորհիլ անգամ մը որ՝ ուրբան ազնուաբրտութիւն , ի՛նչ աստիճան քրիստոնէական զգացմունք , և աղքատաիրութեան պարտ է ըլլալ Արապգծի խանի վերոյիշեալ ազգայնոց յորտն լուծն մէջ՝ որ ծածկաբար ձեռք զարկած են չորս տարիէ ՚ի վեր Տարեգլխոյն իրենց կարողութեան համեմատ խել մը հայազգի պարտականներ բանտերէն և իւր պարտքերէն ազատելով իրենց թըշուառ ընտանեացը քով վերադարձնելու . և այնպէս անոնց Յիսուսի Քրիստոսի Ս. Ծըննդեան օրերը իրենց Քրիստոնէական պարտաւիրութիւնները կատարելուն պատճառ ըլլալու :

Ուրեմն օրհնեալ ըլլայ այս Բնկերութիւնը , օրհնեալ ըլլայ անոնց այս և ասոնց նման ձեռնարկութիւնները , և դարձեալ օրհնեալ ըլլան ամեն անոնք՝ որոնք ասոնց օրինակէն շարժեալ ընկերութիւն մըն ալ իրենք կը կազմեն՝ Աւագ շաբթուն օրերն ալ այս կերպ առաքինի գործի մը ձեռնամուխ ըլլալու : Եւ տա՛ր Աստուած որ բոլոր Ազգայնք կարենային լսել ու տեսնել , անոնց ճաշխարհիկ մարդասիրութիւնը , ողորմածութիւնն ու ճշմարիտ քրիստոնէութիւնը . տա՛ր Աստուած որ ամեն կարող անձնք միանային այս Բնկերութեան հետ . և իրենց հաւաքուած լուսաններովը ազատէին զեռ ուրիշ խել մը ազգային բանտարկեալները , որոնք ըստ հարկի եղած չնչին պարտուց համար իրենց քաղցր կեանքը , ու ըստալի ժամերը , հեռու իրենց սիրելի ընտանեացմէ , բարեկամներէ , և բոլոր մարդկային ընկերութիւններէ՝ ահով վահով տխուր բանտերու մէջ կ'անցնին . . . :

Աստուծոյ զրաճ առննիս կը լսեմք թէ ասոր նման առաքինական գործ մըն ալ Բերայի Հայոց մէջ կատարուեր է , որ ինչպէս Ս . Ե .

բորդութեան Եկեղեցական Մեծարգոյ Աղանձըն Ս . Ծննդեան օրերը Բերայի բովանդակ աղքատը կերպիւ մը ուրախացնելու համար ստորագրութիւն մը բացեր եւ ստիկ բաւական գումար մը հաւաքելով՝ այն աղքատներուն իրենց պիտոյիցը համեմատ պիտի բաժնեն եղեր : Երանի թէ իրենց այս բարենպաստակ ձեռնարկութիւնը յաջողութեամբ պսակուէր , այսինքն Բերայի բարերար եւ աղքատասէր անձանց կողմէն առատապէս նուէրներ ընդունելով՝ ըստ բաւականի դո՛հ ընէին այս տառապեալները :

Եւ արդ ամեն առնն , ու եւս առաւել այսպիսի հրաշալի օրեր այս կերպ բարեգործական ձեռնարկութեանց հետեւող ազնիւ Յարգելեաց՝ մեր կողմէն , մեր անարժան բերնովն ու անկարող գրչովն չեմք կրնար աւելի բան մը ըսել՝ քանի որ իրենց այս բարի գործերը Երկինքը Աստուծային Աթոռին առջեւ իրենց անուններովը հետ կարճանագրուին , եւ այնպէս ժամանակին պիտի լսեն այն տարալին ջնծալի ձայնը որ պիտի դուռէ՝ «Եկոյք օրհնեալք Հօր խնոյ . . . զե ՚ի բանաի էի եւ իկիք առիս . . . զե քաղցեայ եւ ետուք ինձ ուտել . . . մերկ և զգեցուցիք . . . (Լույս) որովհետեւ արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ , և ինձ արարէք» : Ահա վարձքերնին , և յիշուի բիւրապատիկ վարձք :

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԹՈՒՉՆԻՎ ՕՐԵՂԻՐ

1861 Յունուար ամսոյ սկսեալ քառաձալ թերթով , «Թռչնիկ» անունով , ամսօրեայ ըլլալով , տարեկանը 40 դահեկան դնով օրագիր մը ՚ի լոյս ելաւ , որուն հեղինակն է Արգոյ Պ. Վրլիգոր Պալեան ուսումնասէր երիտասարդը :

Այս հրատարակութեան նպատակը որ ինչպէս Յառաջաբանութենէն ալ կ'իմացուի՝ կարելի եղածին չափ Ազգին բարոյականին նպաստելու այլ եւ այլ իրողութեանց վրայ խորհրդաձեւ է :

Ահա լրացաւ ամբողջ՝ Շրջանն Առաջին
Հեզ եւ քաղցրիկ՝ Արեւելեան Դարին
Տարաւ բարեաւ ՚ի միասին այս հին Տարին
Բարոք բերեւ Գոր Տարի՝ Գոր Շրջանին

Խմբագիր-Տնօրեն
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐԻՔՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ , ՅԵՆԱՆՉԵՂԻՍ